Վ. ԳԱՐՆԻՆ

ԱԶԴԱՆՇԱՆ

ՊԵՏՀՐԱՏ
ՅԵՐԵՎԱՆ 1937

30 MAY 2011

891.7115
Գ-36
Ա

Վ. ԳԱՐՇԻՆ

ԱԶԴԱՆՇԱՆ

Թարգմ. Հ. Տ. ԱՎԱԳՅԱՆ

Նկարները
Վ. ԲՈՐՈԴԻՉԵՆԿՈՅԻ

100/42042
42042

ՊԵՏՀՐԱՏ
ՀԼԿՅԵՍՈՒ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ
1937

MAR 2013

2937

ՓՈՔՐԱՀԱՍԱԿ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Խմբագիր՝ Ռ. Զարյան
Տեխ. խմբագիր՝ Լ. Ոնանյան
Սրբագրիչ՝ Ռ. Նշանյան

Գլավլիտի լիազոր Կ—4474, հրաս. 3982
Պատվեր 108, տիրաժ 3000
Հեռհրատի տպարան, Յերեվան, II Կնունյանցի, 4

Սեմյոն Իվանովը ծառայում եր յերկաթուղում իբրև պահակ։ Նրա տնակից մինչև մի կայարանը տասնյերկու վերստ եր, մինչև մյուսը՝ տաս։ Այդտեղից չորս վերստ հեռու անցյալ տարի մի մեծ մանարան բաց արին։ Անտառի յետևից սկսին եր տալիս նրա բարձր ծխնելուղը, իսկ ավելի մոտիկ, բացի հարևան տնակներից, ել բնակություն չկար։

Սեմյոն Իվանովը հիվանդ և քայքայված մարդ եր։ Ինքը տարի առաջ նա յեղել եր պատերազմում. սպասավոր եր յեղել մի սպայի մոտ և նրա հետ մի ամբողջ արշավանք եր կատարել։ Սովածություն ել եր քաշել նա, սառնամանիքի տակ ել եր ընկել, արևի տակ ել եր խաշվել, ճանապարհ եր կորել ամեն անգամ քառասուն, հիսուն վերստերով շոգին ու սառնամանիքին, յեղել եր նաև գնդակների տարափի տակ, բայց, փառք աստծո, վոչ մեկը չեր դիպել։ Մի անգամ գունդը կանգնած եր առաջին ռազմադծում։ Ամբողջ մի շաբաթ տաճիկների հետ փոխադարձ հրաձգություն եր տեղի ունենում. պառկած ե մեր ղրթան, իսկ ձորակի այն կողմը՝

տաճիկներինը, և առավոտից մինչև յերեկո կրակում Սեմյոնի սպան նույնպես ձորակումն եր։ Ամեն որ, որա-կան յերեք անգամ Սեմյոնը ձորակի միջով գնդի խոհա-նոցներից, տաք ինքնայեռ ու ճաշ եր տանում նրա հա-մար։ Տանում ե ինքնայեռը բաց տեղով, գնդակները սուլում են, շրմփում քարերին, սարսափում ե Սեմյոնը, լաց ե լինում, բայց գնում ե։ Պարոն սպաները շատ գոհ ելին նրանից. նրանք միշտ տաք թեյ ելին ունենում։ Արշավանքից նա վերադարձավ անվնաս, միայն թևերն ու վոտքերն ելին սկսել ցավեր։ Շատ տառապանքներ կրեց նա այն որվանից։ Յեկավ տուն — ծերունի հայրը մեռավ, չորս տարեկան տղան նույնպես մեռավ կոկորդի ցավից։ Սեմյոնը մենակ մնաց իր կնոջ հետ։ Բան դուրս չեկավ նաև նրանց տնտեսությունից, ասենք դժվար ել ե հողը վարել ուռած ձեռքերով ու վոտքերով։ Այլևս իրենց գյուղում ապրելու հնար չունելին, գնացին նոր տեղեր՝ բախտ վորոնելու։ Սեմյոնն իր կնոջ հետ յեղավ և՛ գծի վրա, և՛ Խերսոնում, և՛ Դոնի կողմերում, բայց վոչ մի տեղ բախտը չբանեց։ Կինն աղախին մտավ, իսկ Սեմյոնն առաջվա պես թափառում եր։ Մի անգամ նա գնացքով տեղ եր գնում։ Կայարաններից մեկում, տեսնում ե, կա-յարանապետը, կարծես ծանոթ ե։ Նայում ե նրան Սեմ-յոնը, պետն ել ե գննում Սեմյոնի դեմքը։ Ճանաչեցին իրար՝ բանից դուրս յեկավ, վոր իրենց գնդի սպաներից եր։

— Դու Իվանովն ես,— ասում ե։

— Ճիշտ այդպես, ձերդ բարեծնություն, յես ինքս եմ վոր կամ։

— Դու վոնց ես ընկել այստեղ։

Պատմեց նրան Սեմյոնը՝ եսպես ու եսպես։

— Իսկ հիմի ուր ես գնում։

— Ինքս ել չեմ իմանում, ձերդ բարեծնություն։

— Վոնց թե չես իմանում, հիմար։

— Ճիշտ այդպես, ձերդ բարեծնություն, գլուխ դնե-

լու տեղ չունեմ։ Հարկավոր ե, ձերդ բարեծնություն, վորևե աշխատանք փնտռել։

Նայեց նրան կայարանապետը, միտք արեց ու ասաց։

— Ահա ինչ, ախպերս, մնա առայժմ կայարանում։ Դու, կարծեմ, ամուսնացած ես։ Վորտեղ ե կինդ։

— Ճիշտ այդպես, ձերդ բարեծնություն, ամուսնա-ցած եմ։ Կինս Կուրսկ քաղաքումն ե, ծառայում ե մի վաճառականի մոտ։

— Դե, վոր այդպես ե, գրիր կնոջդ, թող գա։ Զրի տոմս կճարեմ։ Այստեղ մեր յերկաթուղու տնակներից մեկն ազատվելու յե, քո մասին կխնդրեմ ուղեշրջանի պետին։

— Շատ եմ շնորհակալ, ձերդ բարեծնություն, պա-տասխանեց Սեմյոնը։

Նա մնաց կայարանում։ Ոգնում եր կայարանապետի խոհանոցում, փայտ եր ջարդում, բակը, կառամատույցն եր ավլում։ Մի շաբաթից հետո կինը յեկավ և Սեմյոնը ձեռքի սայլակով գնաց իր տնակը։ Տնակը նոր եր, տաք, վառելու փայտ ինչքան ուզես կար։ Նախկին պահակնե-րից ել մի փոքրիկ բանջարանոց եր մնացել, կես դեսյատինի չափ վարելահող ել կար յերկաթգծի յերկու կողմերում։ Ուրախացավ Սեմյոնը։ Սկսեց միտք անել, թե ինչպես տնտեսություն կարգի իր համար, մի կով ու մի ձի կգնի։

Նրան տվին ամբողջ պետք յեկած սարքը՝ մի կանաչ որոշակ, մի կարմիր դրոշակ, լապտերներ յեղջյուրիկ, մուրճ, բանալի — պնդողակներն ամրացնելու համար, նիգ բահ, ավելներ, բոլտեր, բևեռներ. տվին յերկու կանո-նագիրք և գնացքների չվացուցակը։ Սկզբում Սեմյոնը գիշերներն ել չեր քնում, շարունակ չվացուցակն եր ան-գիր անում։ Գնացքը դեռ յերկու ժամից հետո պիտի անցնի, իսկ նա շրջում ե իր գծամասը, նստում ե տնա-կի մոտ և միշտ նայում ու ականջ դնում, չՔն դողում

արդյոք ռելսերը, չի՞ աղմկում գնացքը։ Անգիր սովորեց նաև կանոնները։ Զնայած լավ չեր կարդում, վանկ-վանկ, բայց և այնպես լավ սովորեց։

Ամառ եր։ Աշխատանքը ծանր չեր, ձյուն մաքրել չկար, գնացքներ եկ շատ չեչին անցնում այդ ճանապարհով։ Շրջում է Սեմյոնն իր վերստը որեկան յերկու անգամ, փորձում է տեղ տեղ պնդողակներն ամրացնել, խիճն է հավասարեցնում, ջրի խողովակներն է նայում և տուն է գալիս իր տնտեսությունը կարգի բերելու։ Նրա տնտեսությունում, սակայն, մի խոչնդոտ կար. ինչ վոր մաքին դնում է, վոր անի, այդ բոլորի մասին ճանապարհային վարպետին է խնդրում, իսկ նա ուղեշրջանի պետին է զեկուցում։ Մինչև խնդիրքը յետ է դառնում, ժամանակն անցնում է։ Սեմյոնն ու իր կինը նույնիսկ ձանձրանալ սկսեցին։

Անցավ մի յերկու ամիս, Սեմյոնն սկսեց հարևան պահակների հետ ծանոթանալ։ Նրանցից մեկը դառամյալ ծերունի յեր, վաղուց մտածում եյին նրան փոխել, հազիվ եր տնակից դուրս գալիս։ Նրա փոխարեն կինն եր շրջում յերկաթուղում։ Մյուս պահակը, վոր կայարանին ավելի մոտիկ եր, յերիտասարդ մարդ եր, ինքը նիհար ու ջլուտ։ Առաջին անգամ Սեմյոնը նրան հանդիպեց յերկաթգծի վրա, յերկու տնակների կես ճանապարհին, շրջագայության ժամանակ։ Սեմյոնը գլխարկը հանեց, բարևեց։

— Բարի որ, — ասաց, — հարևան։

Հարևանը նայեց նրան կողքանց։

— Բարև, — ասաց։

Յետ դարձավ ու հեռացավ։ Հետո եկ կանայք հանդիպեցին իրար։ Բարևեց Սեմյոնի Արինան հարևանուհուն։ Նա եկ չուզեց շատ խոսել, թողեց գնաց։ Մի անգամ եկ Սեմյոնը տեսավ նրան։

— Եդ վո՞նց է վոր, — ասում է, — քուչրիկ չան, քո մարդը խոսելու հետ իսկի գլուխ չունի։

Սեմյոնը թե գյուղի և թե արտավանքի մասին եր պատմում։

Մի պահ լուռ մնաց կինը, հետո ասում է.

— Ե՜հ, ինչ պիտի խոսի նա քեզ հետ։ Ամեն մարդ իր ցավն ունի... Դնա՛, ասուած քեզ հետ։

Սակայն, անցավ ելի մի ամիս, ծանոթացան։ Հանդիպում են Սեմյոնն ու Վասիլին յերկաթգծի վրա, նստում են յեզրին, ծխամորճ են ծխում ու պատմում իրար իրենց ապրուստի մասին։ Վասիլին ավելի շատ լուռ եր մնում, իսկ Սեմյոնը պատմում եր և՛ իրենց գյուղի մասին, և՛ արշավանքի մասին։

— Յես իմ կյանքում,— ասում է,— քիչ դարդ ու ցավ չեմ քաշել, չնայած դեռ ենքան էլ շատ չեմ ապրել։ Ատուած ինձ բախտ չուվեց։ Դե ում ինչ վոր ճակատին գրել է տերը, ենպես էլ պիտի լինի։ Բա՛ս, ասպես է, Վասիլի Ստեպանիչ։

Իսկ Վասիլի Ստեպանիչը ծխամորճը ռելսին թխկացնելով դատարկեց, վեր կացավ ու ասաց.

— Ե՜հ, ճակատի գիրը չի, վոր իմ ու քո կյանքն ուտում է, այլ մարդիկ են։ Ես աշխարհում մարդուց ավելի գիշատիչ ու չար գազան չկա։ Գայլը գայլին չի ուտում, իսկ մարդը մարդին վողջ-վողջ է ուտում։

— Չե՛, ախպերս. գայլը գայլին ուտում է, եդ մի՛ ասա։

— Խոսքի որինակ ասացի։ Բայց ինչ ուզում ես ասա՝ մարդուց ավելի դաժան արարած չկա։ Թե վոր մարդկային չարությունն ու ագահությունը չլինելին — ով չեր ապրի։ Ամեն մեկը հենց ուզում է մսիցդ բռնի, մի լավ պատառ պոկի ու կուլ տա։

Մտքի մեջ ընկավ Սեմյոնը։

— Զգիտեմ,— ասում է,— ախպեր ջան։ Դուցե և եդպես է,— իսկ թե վոր եդպես էլ է, ուրեմն հենց ասածուց է եդպես սահմանված։

— Իսկ թե վոր եդպես է,— ասում է Վասիլին,— ուրեմն մենք էլ բան չունենք խոսելու իրար հետ։ Մենք վոր

ամեն մի վատ բան ասածու վրա գցենք. ինքներս էլ նստենք ու համբերենք, ուրեմն, ախպերս, մենք մարդ չպիտի լինենք, այլ անասուն։ Ե՛ս է իմ ասածը։

Շուռ յեկավ ու գնաց, առանց հրաժեշտ տալու։ Վեր կացավ և Սեմյոնը։

— Հարևա՛ն,— բղավում է,— բա ինչի՞ համար ես հայհոյանք անում։

Հարևանը յետ էլ չնայեց, գնաց։ Յերկար նայեց նրա յետևից Սեմյոնը, մինչև վոր Վասիլին ծածկվեց ճանապարհի վոլորտում։ Վերադարձավ տուն ու ասում է կնոջը.

— Վա՛յ, Արինա, ինչ հարևա՛ն ունենք մենք՝ մարդ մի՛ ասա, մի՛ դև ասա։

Սակայն, նրանք չխռովեցին իրարից։ Ելի հանդիպեցին և առաջվա պես խոսել սկսեցին, դարձյալ նույն բանի մասին։

— Ե՛, է, ախպերս, թե վոր մարդիկ ասպես չլինելին... չելինք նստի յես ու դու ես տնակներում,— ասում է Վասիլին։

— Ե՛, տնակն ինչ է վոր... վոչինչ, ապրել կարելի՛ յե...

— Ապրել կարելի յե, ապրել կարելի յե... Այ, թե մարդ ես, դու էլ... Շատ ես ապրել, քիչ սովորել, շատ ես նայել, քիչ տեսել։ Աղքատ մարդու համար, ուզում ես տնակում, ուզում ես վորտեղ էլ լինի, ապրուստ ուր է։ Ուտում են քեզ ես գել ու գազանը։ Ամբողջ հյութդ են քամում քեզնից, թե վոր ծերացար՝ դուրս կդցեն, վոնց վոր մի թերմացք, խոզերին կեր կանեն։ Դու ինչքա՞ն ոռճիկ ես ստանում։

— Դե, քիչ է, ինչ խոսք, Վասիլի Ստեպանիչ։ Տասներկու ռուբլի։

— Իսկ յես տասներեք ու կես։ Դե թույլ տուր քեզ հարց տալ, ինչո՞ւ։ Որենքով վարչությունից բոլորին էլ հավասար է հասնում՝ ամիսը տասնհինգ ռուբլի, վառելիք,

լուսավորություն։ Բա, ել ո՞վ է ինձ ու քեզ համար տասներկու կամ թե տասներեք ու կես վորոշել։ Թույլ տուր քեզ հարցնել... Իսկ դու ասում ես՝ ապրել կարելի չե։ Դու հասկացիր, հո եստեղ խոսքը մեկ ու կես կամ չերեք ռուբլու մասին չի։ Թեկուզ հենց ամբողջ տասնհինգ ռուբլին վճարելին։ Կայարանումն ելի անցյալ ամիս։ Դիրեկտորն եր չեկել, տեսա իրեն։ Եսպես մի պատիվ ունեցա։ Գնում է իր համար առանձին վագոնով։ Դուրս չեկավ կառամատույց, կանգնել է... Ե՛հ, շատ չեմ մնա չես այստեղ, չէ, կգնամ՝ ինչքան վոր աչքս կտրի։

— Ախր ո՞ւր պիտի գնաս, Ստեպանիչ։ Հեռվից ամեն բան լավ է չերևում։ Եստեղ դու տուն ունես, տեղ ունես, մի քիչ ել հող կա ձեռքիդ։ Կինդ ել լավ աշխատում է...

— Հող։ Մի տեսնես դու իմ եդ հողը։ Մի չոփ ել չկա ենտեղ։ Գարնանն ուզեցի կաղամբ տնկել, մեկ ել տեսնեմ վարպետն չեկավ՝ «Ե՛ս, ասում է, ի՞նչ բան է։ Ինչո՞ւ առանց հայտնելու։ Ինչո՞ւ առանց իրավունքի։ Կըքանդես, ենպես, վոր հոտն ել չմնա»։ Հարբած եր։ Ուրիշ անգամ բան ել չեր ասի, բայց եդտեղ սատանան մտավ կողը... «Ցերեք ռուբլի տուգանք»...

Լռեց Վասիլին, ծխամորճը քաշեց ու ասում է կամաց.

— Հենց քիչ եր մնացել, վոր պառկեցնելի տեղն ու տեղը։

— Ե՛հ, հարևան, շատ տաքարյուն ես, այ, թե ինչ կասեմ քեզ։

— Տաքարյուն չեմ, այլ ճշմարտությունն եմ խոսում ու մտածում։ Դեռ չես նրան կուտացնեմ, են կարմիր ռեխին։ Իրեն, ուղեշրջանի պետին պիտի գանգատ անեմ։ Ցույց կտամ չես նրան։

Ցեվ ճիշտ վոր գանգատվեց։

Մի անգամ ուղեշրջանի պետն անցնում եր ճանապարհն ստուգելու։ Ցերեք որ հետո նշանավոր մարդիկ պիտի գալին Պետերբուրգից՝ ստուգում կատարելու և մինչև նրանց գալը ամեն ինչ պետք եր կարգի բերել։ Ճճավազ լցրին, հավասարեցրին, կոճերն ստուգեցին, բեվեռները պնդացրին, պնդողակներն ամրացրին, սյուները ներկեցին, հրամայեցին անցումների տեղը դեղին ավազ լցնել։ Հարևան պահակ կինն իր հալիվորին ել դուրս քշեց խոտը մաքրելու։ Աշխատում եր Սեմյոնն ամբողջ մի շաբաթ։ Ամեն ինչ կարգի բերեց, իր բաճկոնն ել նորոգեց, մաքրեց, իսկ պղնձե ճարմանդը լավ փայլեցրեց աղյուսով։ Աշխատում եր նաև Վասիլին։ Ուղեշրջանի պետը չեկավ դրեզինով։ Զորս բանվոր բռնակն ելին պըտտեցնում, ժանանիվները վզզում են, սլանում է սայլակը ժամը քսան վերստ, վոնց են գվվում անիվները։ Մոտեցան Սեմյոնի տնակին։ Մոտ ցատկեց Սեմյոնը, զեկուցեց զինվորավարի։ Ամեն ինչ կարգին եր։

— Դու վաղուց ես այստեղ,— հարցնում է պետը։

— Մայիսի չերկսից, ձերդ բարեծնություն։

— Լավ։ Շնորհակալ եմ։ Իսկ հարյուր վաթսունչորսերորդ համարում ո՞վ է։

Ճանապարհի վարպետը (նա ել եր պետի հետ դրեզինով չեկել) պատասխանեց.

— Վասիլի Սպիրիդովը։

— Սպիրիդով, Սպիրիդով... Դա հենց նա՞ չե, վորին անցյալ տարի դուք նկատողություն եչիք արել։

— Նա ինքն է։

— Դե, լավ, մի կտեսնենք Վասիլի Սպիրիդովին։ Շարժվիր։

Բանվորները սղմեցին բռնակը։ Դրեզինը ճամփա ընկավ։

Նայում է Սեմյոնը դրեզինին ու մտածում՝— «Դեհ, մի խաղ պիտի խաղան հարևանիս գլխին»։

Մի յերկու ժամից հետո նա գնաց շրջագայելու։ Տեսնում է՝ գծի վրայով գալիս է մեկը, գլխի վրա ել կարծես ինչ-վոր սպիտակ բան է յերևում։ Սկսեց դիտել Սեմյոնը — Վասիլին է։ Փայտը ձեռքին, մեջքին մի փոքրիկ կապոց, թուշն ել թաշկինակով կապած։

— Հարևան, ես ուր եդպես, — բղավում է Սեմյոնը։

Մոտեցավ Վասիլին՝ դեմքն այլայլված, կավիճի պես սպիտակ, աչքերը վայրենի փայլ են ստացել։ Խոսել սկսեց — ձայնն ընդհատվում է։

— Քաղաք եմ գնում, — ասում է, — Մոսկվա... Վարչություն։

— Վարչությունն... Ա՛յ, թե ինչ։ Ուրեմն գանգատ պիտի անես։ Ե՛հ, թող, Վասիլի Ստեպանիչ, մոռացիր...

— Չե, ախպեր, չեմ մոռանա։ Ուշ է արդեն, մոռանալ չի. լինի։ Տեսնում ես, նա ենպես ապտակ խփեց, արյունլվա արեց։ Քանի կենդանի յեմ, չեմ մոռանա, չեմ թողնի եդպես։

Բռնեց Սեմյոնը նրա ձեռքը։

— Թող, Ստեպանիչ, ճիշտ եմ ասում. դրանից իսկի լավ բան չի դուրս գա։

— Ե՛հ, լավ բանս վորն է։ Ինքս ել գիտեմ, վոր բան չի դուրս գա, ճիշտ եյիր ասում դու ճակատագրի մասին։ Ինձ համար լավ չի լինի, բայց արդարության համար, ախպերս, պինդ պիտի կանգնեմ։

— Ախր, մի ասա՛, ինչից դուրս յեկավ ես բոլորը։

— Դե՛, ինչից... Նայեց ամեն ինչ, դրեգինից իջավ, տնակի ներսը նայեց։ Յես արդեն գիտեյի, վոր պիտի խիստ պահանջի՝ ամեն ինչ, վոնց վոր հարկն է, կարգի բերի։ Արդեն ուզում եր գնալ. իսկ յես գանգատս արի։ Նա ել իսկույն սկսեց բղավել՝ «Եստեղ ասում է, կառավարական ստուգում է, քո եսպես-ենպեսը, իսկ դու բանջարանոցի համար ես գանգատվում։ Եստեղ, ասում է, գաղտնի խորհրդականներ կան, իսկ դու քո կտղամբով ես մեջ ընկնում»։ Յես չհամբերեցի, մի խոսք ասացի, ասենք այնքան ել վատ խոսք չեր, բայց դե նրան շատ վիրավորական թվաց։ Վոր չծեփե՛ց... իսկ յես կանգնել եմ, կարծես հենց եդպես ել պետք է։ Գնացին նրանք, խելքս դլուխս յեկավ, յերեսս լվացի ու ճամփա ընկա։

— Իսկ տնակը, բա, վո՞նց կլինի։

— Կինս մնաց։ Աչքից բաց չի թողնի, ասենք իրենց հերն ել եմ անիծել իրենց ճանապարհի հետ։

Վեր կացավ Վասիլին, պատրաստվեց ճամփա ընկնի։

— Մնաս բարի, Իվանիչ, չգիտեմ դատաստան կգտնեմ արդյոք։

— Մի՞թե վոտքով ես գնում։

— Կայարանում ապրանքատարին կնստեմ, եդուց Մոսկվա կլինեմ։

Հրաժեշտ տվին իրար հարևանները, գնաց Վասիլին և յերկար ժամանակ չեր յերևում։ Կինը նրա տեղն աշխատում եր, որ ու զիշեր չեր քնում։ Ձեռից գնացել եր բոլորովին, իր մարդու ճամփան նայելով։ Յերրորդ որը բեվիզիան յեկավ անցավ։ Շոգեմեքենան, բագաժի վագոնը, հետո յերկու հատ առաջին կարգի, իսկ Վասիլին չկա։

Չորրորդ որը Սեմյոնը տեսավ նրա կնոջը։ Յերեսը արտասուքից ուռել է, աչքերը կարմրել։

— Յեկե՞լ է մարդդ, — հարցնում է։

Կինը թափ տվեց ձեռքը, վոչինչ չասաց ու գնաց իրենց տնակի կողմը։

Դեռ յերեխա ժամանակ Սեմյոնը սովորել եր ուռենուց շվիներ շինել։ Այրում է ուռենու փայտի միջուկը, ծակեր է բացում, վորտեղ հարկն է, ծայրին շվան է դնում ու ենպես լավ հարմարեցնում, վոր ինչ ուզում ես, են ել նվագիր։ Պարապ ժամանակը շինում եր նա եդ

շվիններից և ապրանքատար գնացքի ծանոթ կոնդուկտորի հետ ուղարկում քաղաք — շուկա։ Ենտեղ նրան տալիս էին հատին յերկու կոպեկ։ Բեվիզիայից հետո յերբորդ որը նա կնոջը տանը թողեց՝ յերեկոյան ժամի վեցի գընացքը հանդիպելու, իսկ ինքը վերցրեց դանակն ու անտառ գնաց, ուռենու փայտեր կտրի իր համար։ Հասավ նա իր գծամասի ծայրը, — այդ տեղում գիծը միանգամից թեքվում եր, — իշավ թմբից ու գնաց անտառով դեպի ներքև։ Կես վերստի վրա մի ճահիճ կար և նրա կողքին շատ լավ թփեր կային շվինների համար։ Նա մի ամբողջ կապ փայտ կտրեց սև գնաց դեպի տուն։ Գնում է անտառի միջով։ Արևն արդեն իջել է։ Խորը լռություն է տիրում, լսվում է միայն, թե ինչպես ճռվողում են թռչունները և խշխշում է վոտքի տակ չորափայտը։ Մի քիչ ել առաջ գնաց Սեմյոնը, շուտով և գիծը կլինի։ Յեվ թվում է նրան, կարծես ինչ-վոր մի ձայն է հասնում ականջին՝ կարծես ինչ վոր տեղ յերկաթը խփում են յերկաթին։ Բայլերն արագացրեց Սեմյոնը։ Այդ ժամանակ նրանց գծամասում նորոգում չկար։ «Ես ինչ կարող է նշանակել»,— մտածում է։ Դուրս է գալիս անտառի յեզրը — առջևը յերկաթգծի թումբն է բարձրանում։ Վերևում, գծի վրա մի մարդ է պպզել ու ինչ վոր բան է անում։ Սկսեց կամացուկ վեր բարձրանալ Սեմյոնը՝ կարծում եր վորևե մեկը պնդողակ է գողանում։ Տեսնում է — ես մարդն ել տեղից յելավ, ձեռքին մի նիգ կա։ Բռնացրել է նիգը ռելսին, ու վոր չշարժեց մի կողմ։ Մթնեց Սեմյոնի աչքի առաջը։ Ուզում է բղավի — չի կարողանում։ Տեսնում է՝ Վասիլին է, վազում է վերև, բայց նա նիգն ու բանալին առած թմբի մյուս կողմից գլորվում է ցած։

— Վասիլի Ստեպանիչ, ախպեր ջան, հոգիս, յես դարձիր։ Տուր նիգը։ Ռելսը դնենք տեղը, վոչ վոք չի իմանա։ Յես դարձիր, փրկիր հոգիդ ես մեղքից։

Մթնեց Սեմյոնի աչքի առաջը, ուզում է բղավի — չի կարողանում։

Յետ չնայեց Վասիլին, գնաց դեպի անտառ։

Կանգնել է Սեմյոնը տեղահան արած ռելսի մոտ, փայտերը ձեռքից վայր ընկան։ Գնացքն էլ, վոր հիմա գա, ապրանքատար չի, մարդատար է։ Յեվ կանգնեցնել էլ չես կարող՝ դրոշակ չկա։ Ռելսն իր տեղը չես կարող դնել, դատարկ ձեռքերով բևեռները չես կարող խփել։ Վազել է պետք, անպայման վազել տնակն ու վորևե գործիք բերել։ Տեր աստված, ոգնիր ինձ։

Վազում է Սեմյոնը դեպի իր տնակը, շունչը կտրվում է։ Վազում է, և հենց են է պիտի վայր ընկնի։ Դուրս վազեց անտառից — մինչև տնակը հարյուր սաժեն է մնացել, վոչ ավելի, լսում է գործարանի շչակը սուլեց։ Ժամը վեցն է։ Իսկ վեցից յերկու բոպե անց գնացքը կանցնի։ Տեր աստված։ Փրկիր անմեղ հոգիները։ Կարծես հենց աչքի առաջը տեսնում է Սեմյոնը՝ կդիպչի շոգեմեքենայի ձախ անիվը ռելսի բաց ծայրին, կցնցվի, կողքի վրա կընկնի, կսկսի կոճերը ջարդել ու ցրիվ տալ, իսկ եդտեղ հենց վոլորոտն է, կլորացումը, և թումբը, և խորությունն էլ դեպի ներքև տասնմեկ սաժեն է, իսկ ենտեղ, յերրորդ կարգի վագոնում ժողովուրդն իրար վրա յե լցվել, լիքը մանր յերեխաներ են... Նստած են հիմա նրանք, վոչ մի բանի մասին չեն մտածում։ Տեր աստված, մի խելք դիր գլուխս։ Չէ, մինչև տնակը վազելու և յետ դառնալու ժամանակ չկա։

Կանգ առավ Սեմյոնը, յետ դարձավ, վազեց առաջվանից ավելի արագ։ Վազում է գրեթե ուշքը կորցրած։ Ինքն էլ չգիտի, էլ ինչ պիտի լինի։ Հասավ տեղահան արած ռելսին՝ իր փայտերի կույտն ընկած է եդտեղ։ Կռացավ նա, վերցրեց մեկը, ինքն էլ չի հասկանում ինչի համար, շարունակեց վազել։ Թվում է նրան, վոր արդեն գալիս է գնացքը։ Լսում է հեռու սուլոցը, լսում է՝ ռելսերը համաչափ ու կամացուկ ցնցվել սկսեցին։ Էլ վազելու ուժ չկա։ Կանգ առավ սարսափելի տեղից հարյուր սաժենի վրա։ Եդտեղ կարծես լույս ծագեց նրա գլխում։ Վերցրեց նա դդակը, հանեց միջից մի չթե թաշկինակ, կոշիկի ճաքից հանեց դանակը, խաչ հանեց յերեսը՝ տեր աստված, կամքդ լինի։

Խփեց դանակով իր ձախ թևին արմունկից վերև։ Դուրս ցայտեց արյունը, վազեց տաք հոսանքով։ Թրջեց նրանով իր թաշկինակը, ձգեց, հարթեց, կապեց փայտի վրա ու պարզեց իր կարմիր դրոշակը։

Կանգնել է, դրոշակն է թափահարում, իսկ գնացքն արդեն յերևում է։ Չի տեսնում նրան մեքենավարը, շուտով կմոտենա, իսկ հարյուր սաժենի վրա չի լինի կանգնեցնել ծանր գնացքը։

Իսկ արյունը հոսում է ու հոսում։ Սեղմում է Սեմյոնը վերքն իր կողքին, ուզում է բռնի այն, բայց արյունը չի դադարում։ Յերևի խորն է վիրավորել նա իր ձեռքը։ Գլուխը պտտվեց, աչքերի առաջ սև ճանճեր յերևացին։ Իսկ հետո բոլորովին սևացավ աչքերի առաջը։ Ականջներում կարծես զանգեր են զողանջում։ Չի տեսնում նա գնացքը, և չի լսում աղմուկը։ Մի միտք կա գլխում՝ «Չեմ դիմանա, վեր կընկնեմ, դրոշակը վեր կըգցեմ, կանցնի գնացքն իմ վրայով... ոգնիր տեր աստված, մի մարդ ուղարկիր ինձ փոխարինելու»...

Ու սևացավ նրա աչքերի առաջ և դատարկությունը տիրեց հոգուն և նա վայր գցեց դրոշակը։ Բայց դետին չընկավ արյունոտ դրոշակը՝ մի ինչ վոր ձեռք բռնեց այն ու բարձր պահեց մոտեցող գնացքի հանդեպ։ Մեքենավարը տեսավ այն, փակեց կարգավորիչը և բացեց հակաշոգին։ Գնացքը կանգ առավ։

Դուրս թռան վագոնից մարդիկ, խռնվեցին եդտեղ։ Տեսնում են՝ պառկել է մի մարդ, ամբողջովին արյու-

Նոտված, ուշաթափ, մի ուրիշն էլ կանգնել է նրա մոտ արյունոտ լաթով փայտը ձեռքին։

Նայեց Վասիլին բոլորի վրա, կախեց գլուխը։

— Կապեցեք ինձ, — ասում է, — չես եմ տեղահան արել ռելսը։



«Ազգային գրադարան»
NL0390474

2937

գինը 50 կ.

В. ГАРШИН
СИГНАЛ
ГИЗ АРМ. ССР ЕРЕВАН

891.715
Գ-36